

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Հատը 3 մեծալիք Իգմիթի մէջ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹ ԶՈՐԵՔՈՐԹԻ ԵՒ ՁԵՐԱԹ ՕՐԵՐԸ

Դուրսերը 4 մեծալիք Հատը

Յ. Գ. ՍԱՐԳՍԵԱՆ

Համարատու—Տնօրէն

ՏԱՐԵԳԻՆ ԿԱՆԻՍԻԿ

ԻԶՄԻՐ . . . Օսմ. ոսկի 1
ԴՈՒՐԱՐ . . . Մէճիֆայէ 6
ՕՏԱՐ ԵՐԿԻՐ . . . Ֆրանք 25

ԾԱՆՈՒԹԱԳԻՆ

5 զրուշ տողը ՄԵԿ ԱՆԳԱՍ
2 զրուշ . . . ԵՐԿՈՒ ԱՆԳԱՍ
60 փարա . . . ԵՐԵԹ ԱՆԳԱՍ

Չ. Գ. ՊԱՆԹԱՔԱՆԵԱՆ

Հիմնադիր

Խ. ԴԵՐԶԱԿԱՆ, Կը տնօրինէ բաժանորդագրութեան եւ օժանդակման վե-
րաբերեալ բոլոր գործերը: Ուսկից—Պէտէսմէն

Որ եւ է գրութիւն, յօդուած կամ նամակ, որ ուղղակի ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ
կը վերաբերի, տնօրէնին կը դրկուի: Սէվիլ խան Թիւ 17

ԻԶՄԻՐ

Շաբաթ, 17/29 Սեպտեմբեր

Գաւառիս կառավարիչ Վսեմ.
Հաճի նաչիւր փաշա, որ շաբա-
թէ մը ի վեր Սարուխանի Սան-
ճազին զանազան քաղաքներն
այցելութեան գացած էր, հինգ-
շաբթի օր քաղաքս վերադար-
ձաւ: Իրեն կ'ընկերանար մեր վի-
լայէթին Մէքսուդօֆի Հիւսէյին
էֆէնտի:

Շաբթուս մէջ հասած անձրեւ-
ները, որք մինչեւ այսօր կը շա-
րունակեն, կրկին մեծ քնանքեր
հասցուցին երկրագործութեան,
մասնաւորապէս չամիչներուն:
Այսպէս, կ'պատմուի թէ, Վուր-
շայի մէջ 15 հազար օխայի չամի-
չ չամիչ թրջուած են: Իսկ Փոռ-
նար-Պաշի կողմերը չամիչով լե-
ցուն բազմաթիւ տուրքներ տա-
նէլ-տարբեր է հեղեղը: Ուրիշ
տեղեր ալ կան քնանքեր բայց
համեմատաբար քիչ են:

Սարայքէջի գայիմադամ ճե-
մալ էֆէնտի, Ֆոշայի գայիմա-
դամ կոչուած է:

Տէնիզլիի գայիմադամ Ահմէտ
Նուրի էֆէնտի, Սարայքէջի
գայիմադամ կոչուած է:
— Շաբթուս մէջ կրկին հրդեհ
ծագեցաւ Սպարթաքեան ֆեր-
իսանէի մէջ, բայց չուսող կարե-
ւի եղաւ զսպիւն: 230 ոսկի քնատ
կը հաշուուի:

Կեօղ-Թէփէ գիւղակին մէջ
քառամեկի ոճրագործութիւն մը
տեղի ունեցաւ երեքշաբթի գի-
շեր:

Չարագործները տուն մը կո-
խելով, ուր կը գտնուէին Պ. Լո-
բէնձօ և Պ. Բանաթօթ Բօքլու-
ճալը, հրացանի հարուածներ կը
պարպեն ասոնց վրայ և կը սպան-
նեն, Կըսուի թէ վրէժխնդրու-
թիւնն է այս եղեռնագործու-
թեան շարժառիթը:

Ձրոյց կայ թէ, Միտիլիի կա-
ռավարիչ Վսեմ. Քէմալ Պէյ, Սու-
րուի վիլայէթին ընդհանուր
կառավարիչ պիտի կոչուի:

Մէնէմէն կը գրեն մեղ Սեպտ.
15 թուականաւ:

Վիլայէթիս ընդհանուր կա-
ռավարիչ Վսեմ. Հաճի նաչիւր

փաշա այս առաւօտ քաղաքս
հասաւ, Ալաշէհիլէն յատկապէս
Նորին վսեմութեան համար ճոն-
քայ ելլող կառավարմամբ: Հա-
սած միջոցին անմիջապէս կառա-
վարութեան դռնը գնաց և բո-
լոր պաշտօնեաները իր ըով կան-
չելով հարկ եղած կէտերու վը-
րայ տեղեկութիւններ և բացատ-
րութիւններ պահանջեց: Վար-
չական ժողովոյ անգամայն բաւա-
կան հարցումներ քննարկ, վիճա-
կիս իշխանութեան պաշտօնեա-
ներուն, բնակչոց կացութեան,
և երկրագործութեան ինչ վի-
ճակի մէջ ըլլալուն վրայ: Հար-
ցուց նաեւ թէ, աւաղակութիւն-
ներ կը պատահին արդեօք հոս
ժողովոյ անգամը Նորին վսեմու-
թեան հարցումներուն գոհացու-
ցիչ պատասխաններ տուին, մա-
նաւանդ աւաղակութեանց մա-
սին յայտնեցին թէ, թէ եւ ժա-
մանակաւ երբեք կը պատահե-
ին, բայց Նորին վսեմութեան
գաւառիս կառավարչութեան ղե-
կին խմատօրէն ձեռքն առնելէ
ի վեր ամենեւին աւաղակութեան
ղէպ մը չէ պատահած:

Յետոյ Նորին վսեմութիւնը
յորդոր կարգաց որ փողոցներու
մաքրութեան հոգ տանին, և
գիշերը գոնէ քաղաքին կարեւոր
կէտերուն մէջ լապտեր վառեն,
նոյնպէս փոյթ տանին գոնէ կա-
յարանին առջեւ ընդարձակ միջն-
ուղի մը չլինել և այլն և չն:

Կը յուսանք որ Նորին վսեմու-
թեան հրամաններն ու յորդոր-
ները ազգեցյալի ընկերակցութեան
կայս իշխանութիւնը կը փութան
իրականացման ձեռնարկելու, վա-
սեմի իրօք աններելի է որ այս-
քան թերութիւններ կ'ենան Իգ-
միթի մօտիկ գիւղաբնակիչ մը
մէջ:

Այնուհետեւ Ն. Վսեմութիւնը
բոլոր պաշտօնէից սենեակներն
այցելելով, անոնց գործոց ուղ-
ղութիւնները աչքէ անցուց: Ա-
պա այցելեց բնակիչ և բոլոր
բանաստեղծները քննեց, զի մի
գուցէ յանրաւի և առանց դա-
տապարտութեան անարարութեան
գտնուին: Այցելեց տառասորգի
արուց վարդուկեան, Ռիշախի
գալուցի, և կրկին կառավարու-
թեան դռնը վերադառնալով,
բոլոր պաշտօնէից հարկ և պատ-
շաճ եղած հրահանգներն ու յոր-
դոները տալէ ետեւ երեկոյին
կայարան իջաւ և մեկնեցաւ Իգ-
միթ:

Տեղւոյ Հայ հասարակութե-
ան նմանք ժամանակէ մ'ի վեր
դիտողութիւններ և դատողու-
թիւններ կ'ընեն եղէր լրագրոյ
նորոգ հրատարակութեան և
խմբագրութեան նկատմամբ:
Շատ իրաւացի են ամեն ոք ա-
ղաթի դիտողութիւն և դատու-
ղութիւններ ընել իր խելքին հա-
սածին չափ, սակայն կէտ մը կայ
որ դժբաղդաբար վրիպած է ի-
րենց ուշադրութենէն: Այսինքն
աղաղակութիւն ունին՝ միմայն
լրագրի մը յայտնած կարծեաց
վրայ դիտողութիւններ ընել, ա-
նոր կարծեաց հասանիլ կամ չհա-
սանիլ, սխալ կամ ուղիղ արտա-
այտութիւն է ըսել և այլն, և
եթէ կողմնէն ընկալատել մամուլ
միջոցաւ, Բայց ծանրախոհու-
թիւնն ու աղաղակութեան սկզբ-
բունքն ամենեւին չեն ներքէ մէ-
կումը որ՝ որեւէ լրագրի մը խմբ-
ագրութեան կամ տնօրինու-
թեան հարցը յայտնուի յա-
ւակութիւնն ունենայ: Վսեմի
լրագրութիւնը, սկզբամբ, ինքն-
իշխան քարոզութիւն մ'է, և
ինքնիշխան քարոզութիւն մը՝
չլրնար մանաւորներու հաճոյից
եռեկէն երթալ: Ոչ թէ լրագրու-
թեան, որ հասարակային բնու-
թիւն ունի իր գրից մէջ, հապա-
նան պարզ անհատի մ'իսկ իրեն
յատկացուցած սկզբունքը, նե-
րելի չէ, ուրիշներու կամաց հա-
մեմատ քաղցրունելու ջանքեր
ընել:

Ո՛վ որ այդ յաւակնութիւնն
ունենայ, իր անմտութիւնն ու
փոքրգիւղութիւնը կ'ապացուցա-
նէ: Որեւէ անհատ, ինչ գիւրք
և աստիճան ալ որ ունենայ հա-
սարակութեան մէջ, պէտք չէ
որ կոշիկէն վեր ելլէ և իր ար-
ժանապատուութիւնը կորսնցունէ,
եթէ չուզէր Ապէղէսի կշտաբա-
նաց կենդանիլ:

Առ այժմ կը գոհանանք այս
երկու տողով, աւելցունելով սա-
կայն, որ ոչ թէ սա կամ նա
անհատ մը՝ այլ կառավարութիւն
մը, տէրութիւն մը անգամ իրա-
ւունք չունի լրագրի մը սկզբան
խառնուիլ, եթէ ոչ ընդհանուր
օրէնք մը դնել անոր: Մեր ժո-
ղովուրդին մէջ կրտսնուի մաս-
նաւորապէս այս ստրկութիւնը,
ժողովուրդ մը՝ որ կարի ցաւ է
ըսել, մեծ մասամբ կորսնցուցած
է իր անհատական կարծեաց և
կենցաղին աղաղակութիւնը, կամույ
կամ ակամայ՝ ստոմարքով և սքե-
տովով, այլ ոչ ուղիղով լեցուն
մարդերու խաղաղիլը դարձած
ըլլալով:

Մասին:

Վեհ. Սուլթանին բժշկապետ
Վսեմ. Մալոյէնի փաշային
երեկոյ մեր Պատրիարքարանը
գնաց յայցելութիւն Ս. Պատրի-
արք Հօր, բայց Ն. Սրբազնու-
թիւնն անձնական տկարութեան
պատճառաւ խապիւղ գնացած
ինկելով, Վսեմ. փաշան Գեռ. Փո-
խանորդ Հօր կողմէ ընդունուե-
ցաւ:

Վսեմ. Մալոյէնի փաշային
առ. Ս. Պատրիարքն ընծայած
ոսկի ընշատուիին վրայ «Կիտի-
Կիտի-ԳՈՒԼԼԱՆ» գրուած է
կըսէ թրքարբաւ թերթը:
Բայց մեք ստուգեցինք որ այդ-
պիսի ռամկական անճաշակ խօսք
գրուած չկայ վրան, այլ հե-
տեւեալ ուղերձը փորագրուած
է Ֆրանսերէն լեզուաւ:

ՅԵՄԱՍԱԿ ԲԱՐԵՊԱՏԱԿԱՆ
ՍԵՒՆ ԵՒ ԲԱՐՁՐ ՍՐԵԱՋՆԻԹԻՆ
Տ. ՆԵՐՍԵՍ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅՈՅ
Կ. ՊՈԼՍՈՅ
ՆՈՒԻՐԵԱԼ Ի ՄԱՎՐՈՅԵՆԻ ՓԱՇԱՅԷ
10 ՍԵՊՏ. 1883 Ի ՖԵՆԷՐ
Ի ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ ՅՈՒՆԱՅ

Թ Ո Ն Ք Ի Ն

Հոնի-Գոնիէն Թայմիլ թղթա-
կիցը կը գրէ թէ, բաղմաթիւ Ձի-
նացի զօրքեր դատարիք ըլլալով
Բալիկոն-Նուառներու հետ կը
խառնուին որոնց կան գլխաւորը
խիտ զորաւոր մէկն է:

Կըսուի թէ Բալիկոն-Նուառ-
ներու մէջ օտարականներ ալ կան
կուռուց:

Գաղղիացիք կը շարունակեն
գնել շոգենաւներ և ձիեր:

Աժանս Հուտաի գործակալու-
թիւնը կը հեռագրէ Սախիսէն.
Ութ հարիւր հոգեւ խումբ մը
Բալիկոն-Նուառներու վրայ յար-
ձակեցաւ և ետ մղեց զիրենք,
և փառաւոր յաղթութիւն մը
ետեւ երկու գիւղակներու տի-
րացաւ: Զօրապետ Պուէթ հի-
ւանդանալով Հոնի-Գոնի գնաց:
Գնդապետ Պիլօ տանձնեց հա-
մանատարութիւնը: Մեր (Գաղ-
ղիացեաց) զօրաց առողջութիւնն
ու բարոյական վիճակը կատար-
եալ են:

Հ Ն Ո Ւ Ք Ի Ր

Բէթերզպուրկ, 26 Սեպ.
Ժուրնալ Սէն—Բէթերզպուրկ

լրագրի Պուլիարիոյ մէջ պաշտօ-
նեւթեան վերջին փոփոխութեան
վրայ խօսելով, կըսէ թէ, այս
Խորհրդարանի կազմութիւնը,
իշխանութեան մէջ ընդհանուր
և անմիաբանութիւններ նախա-
տեսել կուտայ:

Սօյոզէֆ և Գոլպար զօրապետ-
ները, կը յաւելու յիշեալ թերթը
իրենց հրաժարականը տուին,
Զարին արտօնութեամբ, վստի-
չէին ուղերձ օտանձնել այն միջոց-
ներու պատասխանատուութիւնը.
զորս վտանգաւոր կը նկատէին:

Ժուրնալը կ'ըրազեցունէ թէ,
Ռուսաստան չա՛հ ունի Պուլիարիոյ
վիճակին նկատմամբ, ուստի չի-
կրնալ անտարբար աչօք նայիլ
ապագայ պատահարաց: Սօֆիակ
մեր գործակալար Պ. Եօնիէն
պարագայից համեմատ պիտի
ուղղէ իր ընթացքը:

Բէթերզպուրկ, 26 Սեպտ.

Այսօրուս Ժուրնալ տը Սէն
Բէթերզպուրկը երկար յօդուած
մը կը հրատարակէ, որով կը հաս-
տատէ թէ, Պուլիարիոյ մէջ այժ-
մու գրգռեալ վիճակը տեւան-
լով, Ռուս անդամները Պուլիար
Խորհրդարանէն կը հրաժարին,
վստիալով որ մի գուցէ կառա-
վարութիւնը վտանգաւոր միջոց-
ներ ձեռք առնալ Պուլիար ձգ-
տուներու դէմ:

Ժուրնալը կըսէ թէ, Ռուսաս-
տան չպիտի կրնայ անտարբեր
հանդիսատես մը ներկայանալ
այս եղելութեանց առջեւ, և թէ
պատահարաց համեմատ պիտի
կարգադրէ իր ընթացքը:

Լոնդոն, 26 Սեպտ.

Դահլիշէն կը հեռագրեն Տէյլի
Նիւզի:

«Սուտանի զօրքերը Տուէն հա-
սան» Խարթումի հարաւային կող-
մէն 110 միոն հեռաւորութեամբ
Մօսկու Օպէրայի վրայ պիտի
քայլն:

Հոմպուրկ, 26 Սեպտ.

Ղազի Մուխթար բաշա կարմիր
Արծուի մեծ ժապաւէնն ստացաւ:

Աթէնք, 25 Սեպտ.

Պ. Ֆօրսթեր, ժամանակաւ Իր-
ւանտայի կողմէ նախարարու-
թեան խորհրդական Պ. Բէնտեր,
անգամ բարձրագոյն, Սըր Ճէյմս
Անտերսոն, գնդապետ Շառլ,
Լոնտոնայի շրջանկրաց վաշտին
գլխաւոր, և ուրիշ անձինք այսօր
հոս հասան Վալթա նաւով:

Անգլիոյ դեսպանը հայկերոյթ
մը տուաւ այս պարոնայց անգ-
լիական դեսպանատան մէջ, ուր
ներկայ էին յոյն նախարար և
օտար տէրութեանց ներկայիչք:
Ֆօրսթեր և այլք յառաջիկայ
հինգշաբթի Պոլիս պիտի մեկնին:

ՔԱՂԱՔԱՊԱՆ

ԱԼՄԱՆԻԱ

Հիւսիսային Ալմանիոյ Կաղէթը, որ Պիզմարք իշխանի բերանն է գրեթէ, մտերմ Վիեննայի նուէլ-Բրէտ-Լիպր լրագրին վրայ յարձակելով կրէ թէ, չարամտութեամբ Գերմանիան Ռուսիոյ դէմ գրգռել կուզէ, և թէ Կաղէթ-Ռուս տը Սէն-Բէթէրգ-պուրկ լրագրին Ալմանիոյ համար արտայայտած սպառնալիքները պաշտօնական կերպարանք մ'ունին, սպառնալիքներ զորս բրած էր այս թերթը՝ Ռուսիոյ կայսերական և Տանիմարքայի արքայական ընտանեաց ֆրէտէրիքս-պօրկի մէջ գումարման նկատմամբ։ Նուէլ-Բրէտ-Լիպր լրագրի բը լաւ գիտէ թէ, կրէ Ալմանիոյ Կաղէթը, Ռուս Կաղէթը վերջին ծայր համարալեւան գործիք մ'է, որ կառավարութեան հետ յարաբերութիւն չունի բընաւ։

ՊՈՍՆԱ ԵՒ ՀԷՐՄԷՐ

Մեր ստացած վերջին լրոյց նա-յելով, կրէ Կաղէթ-Տիպլովա-թիք լրագրը, ասպատակաց խումբեր երեւան ելքը են նուրէն։ Փորձա անուն համբաւաւոր անձը, իստուի չափ լաւ զինւեալ մարդոց գլուխն անցնելով՝ երեւան ելած է Նէվէսինի և Մոքի մէջտեղ, և այդ կողմերը զանազան տեղերէ արշաւներ վերցուցած է։ Յետոյ ետ քաշուած է իր վրայ դրկուող զօրաց առջեւ, և դաշտէ և ետպլնի-քա, Սէրաիկիոյ և Մոթարի մէջ թղթատարաց կարավանին վրայ յարձակելու մտօք։

Միանգամայն կ'իմանանք թէ, Սթոնեան Բովալէվիկ և Ռատայովիկ Դարատարը ձգէր են, երթալ և ապստամբութիւն հանելու համար, առաջինը Փոքայի և երկրորդը Ձակորիկ կողմերը։ Նաև Պոսնիոյ և Հէրսէքի մէջ բազմաթիւ երիտասարդներ գաղտնի կերպով հեռացած են իրենց բընակարաններէն, կարելի է զօրահամարէ վախճելու համար այսպէս վարուած են, բայց պէտք է յիշել որ վերջին յեղափոխութիւնն ալ այդ կերպով սկիզբն առաւ։

ՉՈՒԹԷՐԻՍ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Ժուրնալ տը Ժընէվ լրագրը կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւրէր վերջերս, գաղղիական զօրաց Վերին-Սովուայի ներկայութեան վրայ, ուր զինաւորներ կը կատարեն։ Իրմէ ետեւ ուրիշ հնչեցական թերթերը ալ սկսան մի և նոյն եղելութեան վրայ գանգատիլ։

Վերջինեալ լրագրին այս նըկատմամբ, Վիեննայի վեհաժողովը մէկ արձանագրութիւն կը յիշէ, Սովուայի կողմէ հնչեցական չեղարկութիւնը տարածող միջնեւ Շապլէ և Փօսինի, ուր այդ օտար տեղութիւնները կ'արգելէ մտնելու։

ՊԷԼՃԻՔԱՅ ԵՒ ՀՈԼԱՆՏԱ

Պէլճիքայի լրագիր մը կրէ թէ, կէս պաշտօնական և մասնաւոր տեղեկութիւններ թոյլ

կուտան իրեն հաստատել, թէ Պէլճիքայի և Հոլանտայի մէջ մարտային միութեան մը ծրագիրը չի նուերու վրայ է։

Այս ծրագրին հաւանութիւնն տուէր է Պիզմարք իշխանը։

ԽՐՈՒՍԹԻՍՏԱՆ

Կ'երեւի թէ, կարգը վերահաստատուած է Խրուսթիստանի մէջ։ Աւստրո-Հունգարական կայսրութեան նախարարաց ձեռք առած խիստ միջոցները ապարդիւն չեղան։

Պ. Թիճա, Կրօս-Վարատինի մէջ իրեն տրուած հասցիներով մը մէջ բսած է թէ, ապստամբութիւնը ընդհատ անկարող էր իր յարուցած խնդիրները լուծելու։ Սակայն Պ. Թիճայի այս արտայայտութենէն չհետևիր թէ Աւստրո-Հունգարական միապետութիւնը յաղթած է ամեն դժուարութեանց։ Խաղաղութիւնը եթէ վերահաստատուած է փողոցներու մէջ, սակայն ոչինչ ապահովութիւն կայ որ միտքերն հանդարտած ըլլան։ Ազգային կուսակցութիւնն արմատացած է Խըրուսթիստանի մէջ, և կը կարծուի որ երթալով պիտի զօրանայ այդ կուսակցութիւնը։

ԱԼՄԱՆԻԱ ԵՒ ԱՒՍՏՐԻԱ

Լնտէփանտան Պէլճ լրագրին կը գրեն թէ, Կաթիլի մէջ Պիզմարք իշխանի և Բայնի կողմէն տեսակցութեան տուն, իբր թէ մարտային միութեան մը վրայ խօսած ըլլան, բայց այս լուրն հիմնովին սխալ է։ Նամակագիրը կը լաւեւր թէ այս մասին քաղաքագետի մը հարցոյցի որ ինձ պատասխանեց թէ, Պիզմարք իշխանը սովորութիւն չունի թնդանօթը ստորին վերնուրով լեցունելու։

ԲՈԼՆԻԱ

Բոլնիայի թերթ մը, Յայնիք Բաճնանքի, հետեւեալ յայտնութիւնները կը հրատարակէ։ Աւստրո-Ալմանիական դաշնակցութիւնը, որ Իտալիոյ, ըմպանիոյ և Ռուսիոյ միութեամբ ևս զօրացաւ, Ռուսիոյ դէմ ուղղուած է, անանկ որ Ֆրանսա ևս պիտի միատուր յայտնէ։ Ալմանիոյ, Աւստրիոյ և Ռուսիոյ մէջ պատերազմն անխուսափելի է այս րոպէիս, թէ և Բալնիքի կոմսն ընդդիմանայ։

Այս պատերազմով՝ Պիզմարք իշխանը կուզէ Ռուսիոյ սահմանագլուխներն յետո մղել Բուրնիան նոր ի նորոյ բաժանելով։ Աւստրիա Բոլնիոյ մէկ մասը պիտի առնէ, և Ալմանիան ուրիշ մէկ մասը մինչև Վիլնով, Վարշաւան ալ միատուր։ Ալմանիա պիտի առնէ նաև Պալմիրիկան գաւառներուն մէկ մասը։

Այս պատերազմը Ֆրանսան պիտի տկարացուցէ, նոյն իսկ եթէ պատերազմ ալ չհաստատուի իր դէմ, և իր աղղեցութիւնը պիտի վերնայեւրոպայի մէջ, ի նպաստ Ալմանիոյ։

Բոլնիայի բամբակած աղէտ մը պիտի համարին իրենց համար, Ալմանիոյ կողմէն։ Բոլնիոյ բաժանումը։ Դոհութեամբ տեսնել պիտի ուզեն պատերազմ մը պայմանաւ սակայն որ այդ պա-

տերազմին նպատակն ըլլայ Բոլնիոյ թագաւորութիւնը վերահաստատել։ Աւստրիոյ պաշտպանութեան ներքեւ։ Եւ սակայն Պիզմարք իշխանը թոյլ չպիտի տայ ասոր, և Աւստրիա չպիտի երթարկէ ինքզինքն այնքան մեծ պատերազմի մը վտանգներուն, առանց Ալմանիոյ ապաւինու-թեան։

Ասով մէկտեղ Բոլնիան նորէն բաժանող պատերազմ մը ուրիշ հետեւանք չպիտի ունենայ, եթէ ոչ Ռուսիոյ գերիշնեւել Բոլնիայիները, վտանգի Ռուսիա՝ Ալմանիոյ չափ վտանգաւոր չէ բոլնիական տարրին համար։

ՎԱՏԻԿԱՆ ԵՒ ԲՐՈՒՍԻԱ

Վատիկանի հետ յարաբերութիւնն ունեցող անձ մը հետեւեալը կը գրէ։ Փօրէպոնտան փալիթիք լրագրոյ։

Վատիկանի և Բրուսիոյ կառավարութեան մէջ բանակցութիւնը առաջ կերթան նպատաւոր կերպիւ, հակառակ անոնց՝ որք կը փախաւքին որ այս երկուքին մէջ եղած տարբերութիւնը յաւիտենապէս երկարին։ Թէ և այս մասին դրապէս ոչինչ կրնամ հաղորդել, բայց ներքի է հաւանուել, թէ յարաբերութիւնը առկայ չեն մնացած, և թէ ներդաշնակութիւնը կը տիրէ երկու կողման մէջ, և յուսով է որ գոհացուցիչ լուծում մը տրուի։

Պ. Շլէճերի Հոմով վերադարձը կերպով մը այս երթագրութիւնները կը հաստատէ։

ՍՊԱՆԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Աֆղանիստանի օտար տէրութեանց հետ ունեցած յարաբերութիւնը անգլ. մամուլը ուշք գրաւած են։ Հակառակ այն երբեք միլիոն ֆրանքի գումարին զոր բրիտանական կառավարութիւնը կը գործածէ Լիբիին համար, Լանտայի լրագիրը ապա-հով չեն երեւիր Լիբիին սու Անգլիա տաժած զգացումներուն և հաւատարմութեան վրայ, կամ գոնէ, կանխածոտ աչօք կընային Աֆղանիստանի գրացեաց՝ անոր մօտ բրած ամենափոքր մէկ բնութեան վրայ։

Թէ հրանէն հեռագիր մը կըստանայ Տէլի-Նիուզի թէ, Պարսից Շահը իր ներկայիչներէն մին, Մէրմաշիր-Ֆանը զրկէր է Աֆղանիստան, պատրուակաւ՝ բանակցութիւն պիտի բնէ Պարսկաստանի մէջ ապստամբող այլ և այլ Աֆղան զինուորներու և Լիբիին մէջ մերձաւորութիւն մը գոյացնելու համար։

Տէլի-Նիուզի թղթակցից աւարտագիր չերեւիր հաւատարմութէ Մէրմաշիր-Ֆանի ճանբորդութիւնը՝ այդ նպատակն ունեցած ըլլայ։ Ըստ իր կարծեաց, Պարսկական պատուիրակը գաղտնի հրահանգներ տարած է, ուրիշ ամենակարեւոր խնդիրներու վերաբերող։

Յայտնի է որ Անգլիոյ մամուլը Ռուսիոյ ձեռքը կը տեսնէ Շահին այս պատուիրակը զրկելու գործին մէջ։

Սթանտարտի կը հեռագրեն Հոմովին թէ, Վիեննայի աղատ-

ման 200րդ տարեդարձին առթիւ, Պապը շնորհակալութեան նամակ մը գրած է Աւստրիոյ կայսեր։ Այս նամակին մէջ ըսեղէ ետեւ. թէ կայսրը մեծապէս օգնած է եւրոպական քաղաքակրթութեան պահպանութեանը, Լէոն ԺՊ կը խօսի իրաց ներկայ միճակին վրայ և կ'սլքնէ թէ այժմու քաղաքակրթութիւնը եկեղեցին և պապութիւնը ջնջել կուզեն, մինչդեռ ասոնք (եկեղեցի և պապութիւն) միշտ աշխատած են քաղաքակրթութեան գործին համար։

ԱՐՇ. Կը սխալի Սրբազան Պապը, պատմութիւնն իր քսածին պէս չ'ըսէ։

Ի ՂԱՏ ԿՈՉՈՒՐ, ԴԱՍԱՌՈՐ ՄԸ

Նոր աշխարհի բնակաց բարձր ու կենցաղավարութեան պայմանները շատ տարբեր են հին աշխարհի բնակաց բարձր ամեն տեսակէտով։ Հետազոտ եղբորութիւնը կրնայ կենդանի օրինակ մը ըլլալ թէ, Ամերիկայի մէջ ամենէ լուրջ և մեծագիր մարդիկ, երբեմն ինչ բաներ կընեն, որք մեր մէջ գաղթականութեան, դարմանաց և մեծ աղմուկի պատճառ պիտի ըլլային։

Իոթ Նիւ-Յօրքի մէջ, Վիլիւմ Վաթսըն դատաւորը, սոյն Նահանգի Ստենակալութեան ամեն դատաւարաւոր մէկ անդամն է։ Անցեալ օր, կէս դիշերուան մօտ, Սթենակալութեան վարչակալութիւնը պահող մը կը մտնէ ընթերցելու համար։ Բնթերքը պատրաստել պատուիրակով, դուրս կ'ելլէ Պաթ-Իոթ կողմէ գինետուններէն մին երկուր, և ինչպէս արդէն գլուխը տաքցուցած էր թէ մը, հաճոյք եկաւ իրեն ձեռքի հովանոցը ձորձ Բայնի անուն բնագ. Կոլի Դուսին վրայ կտորէ։ Զայս ընելէ ետեւ, զինեալ մէջ գտնուող բոլոր յաճախորդներուն մէջ մէկ բաժակ ալ պարեց և զնայ ընթերցելու։

Հետեւեալ առաւ Վաթսըն դատաւորը ձերբակալուելով իր պաշտօնակից Չայլէն դատաւորին առջև կը տարուի, որպէսզի պատասխան տայ իր զէմ եղած ամբաստանութեան, որով դատ կըքննար իր զէմ նախընթաց դիշերուան իրմէ հովանոցի հարուածներ ընդունող կաղը։

Առեւտակալ դատաւորին առաջին հարցումներն ընդմիջելով, Վիլիւմ Վաթսըն ամբաստանեալը գոչեց, Նծապէ Է Էթէ։ (Միւսնոյն դատը երկու անգամ չտեսնուիր)։ Եւ գրպանէն պաշտօնական թուղթեր հանելով, ապացուցուց, թէ արդէն դատուած էր միւսնոյն յանցանաց համար և թէ միւսնոյն ամբաստանութեան համար թէր կրնար Երկրորդ անգամ դատուիլ։ Արդ, ահաւասիկ թէ ինչ էր եղելութիւնը։

Այս եղելութիւնը Էթիքաթի օր տեղի ունեցաւ։ Նախընթաց երկու շաբթի առաւ իր բարեկամներէն միւսն շէյյան Ռուսէլի աղջած էր որ անմիջապէս ընկերանայ իր հետ շէյթերում դատաւորին առջև երթալու և զինքն ամբաստանելու թէ ձորձ Բալնիքը ծեծած է։ Դործն այս կերպ եղաւ, և Վիլիւմ Վաթսըն յանցաւոր դատուցաւ, և քանի որ իրողութիւնը տեղի կուենար առանց ծեծ ասորով մարդուն գիտութեան, և քանի որ ներկայ չէր ամբաստանութիւնը հաստատուել համար. ուստի շէյթերում դատաւորը, զինեալով որ յարգանք կը պարտաւորին պաշտօնակիցը իրենց մէջ, դո՛ւ եղաւ միմայն երկու տուրք տուգանաց դատաւարութիւն դատաւորը, որպէսզի (եւ կու տուրքով) յետոյ միատեղ խըմբու գացին անկիւնի գինետունը։

Չայլէն դատաւորը չիքցաւ իր ծի-

ծաղը բռնել, Պ. Վաթսընի ըրած այս խաղին պատմութիւնը լսելով, և արձակեց զայն տեսնելով որ արդէն դատը տեսնուած էր այդ ամբաստանութեան, և ամբաստանութիւն մը երկու անգամ չդատուիր ըստ տրամադրութեան օրինաց։

ՆԵՐՔԻՆ

Մարաշտոյն Ղազի Ահմետ Մուլթոյն փաշա, Պէրլին դաշած միջոցին միատեղ տարած է, Վեհ. Կայսեր կողմանէ, Շէյլքաթի ականակալ պատուանքանք՝ Ալմանիոյ կայսրուհոյն համար, և Օսմանիյէի ականակալ շէյյանքը՝ Ֆրէտէրիք Կիլիմ Վեթեր Սպլէրթ իշխանին համար։ Այս վերջինը թուոն է Կիլիմ Կայսեր և Վիլիթորիա Թա-գուհոյ։

Էքսթրէս կը պատմէ թէ, ասկէ երեք ամիս առաջ, Նուր-ձէմալ անուն չէրքէզ կին մը, Արգաւորութեան գործոց նախարարութեան պալատին մէջ ատրճաւակ պարպած էր Շահին Պէյա. նուն Ձէրքէզի մը վրայ և զանի վրաւորած էր օտքէն, և թէ աւոր պատճառն այն էր, որ Շահին Պէյա՝ Նուր-ձէմալի քոյրը վաճառած էր իր գերի։ Արդ, Մայրաքաղաքին եղեւնադատ ատենանք, Նուր-ձէմալը դատաւարուէր է երեք տարի բանտարկութեան, և Շահին Պէյը երեք ամիս բանտարկութեան և մէկ տալի տուգանաց, գերաւաճառութեան յանցանաց համար։

Վազթ կրէ թէ, Պաղատալ վիլայէթին մէջ օրինադանու-թիւններ կըլլան, մանաւանդ Ազիզի Նահիյէի մէջ, և օրինադան պաշտօնները զերծ կըմնան պատիժէ։

Նոյնպէս յիշեալ թերթը կըպատմէ թէ, Էթմէնի վիլայէթին Ասիւր Դադային մէջ խաղաղութիւնն ու անդորութիւնը վերահաստատուած են, Պէն-Մէրվան ցեղերու հպատակութեամբ։ Եթմէնի իշխանութիւնը մանաւորապէս տեղեկագրութիւն մը պատրաստելու վրայ էր, երկրորդ մէջ քաղաքակրթութիւն ներմուծելու և ժողովրդեան բարեկեցութիւնն ապահովելու միջոցներուն վրայ։ Այդ տեղեկագրութիւնը Վեհ. Սովլանի պիտի ներկայացուէր նոյն վիլայէթի պաշտօններէ բաղկացեալ եւ բնախոնարմութեան մը միջոցաւ։

Տրապիզոնէն հասած լուրերուն համեմատ, տեղւոյն կառավարիչ Կիրատան և Օրտու այցելելով, մեծ քանքեր բրած է այս երկու քաղաքներէն դէպի ներսերն առաջնորդող ճանբանքը լուսնութեանց յառաջացման համար։ Սըրբի փաշա ևս Սամսոն պիտի երթայ, այս քաղաքին Տիգրատակերա առաջնորդող մեծ ուղին լրացունել տալու համար։ Այս ուղին արդէն գործածելի է Սեբաստիոյ մէջ։

Կըսուի թէ մանր ստակ կըսրկու համար ամեն պատրաստու-

թիւն տեւումած է արքունի փողերանոցին մէջ, և այս շարժութիւնը սկսուի գործի:

Պիթիւի կառավարչին կողմանէ պայտօնապետ հեռագրուած է ի Պոլսի թէ, երկրը մարքուած է չարագործներէ, և թէ մինչեւ հիմայ վրանաբնակ Բիւրտերու կողմանէ գողցուած արջառներն ետ առնուելով իրենց տէրերուն տրուած են:

Հալէպի քաղաքապետական բժիշկ Թորոս Ահմէտ Փուստէ-Ֆէնտի, նոյն գաւառին տեղագրութիւնն ըրած է, որմէ կը հասկնա թէ գաւառին մէջ վեց հատ հանքային ջուրեր գտնուէր են, որք խիստ օգտակար են եղեր մորթի հիւանդութեանց: Այս ջերմութիւններն երեքը Հալէպի կողմերը, մէկը Ուրֆայի կողմերը՝ Եփրատայ մօտ, հինգերորդը՝ Մարաշի կողմերը, և վեցերորդը, Եփրատայ ձորին մէջ Չորի կողմերը կը գտնուին: Տեղագրութիւնը կըսէ նաեւ թէ Հալէպի շրջակաները պղնձի, դեղին և ճերմակ մարմարիներ հանքեր կան, ինչպէս նաեւ ամուրի հանք մը: Հալէպէն 20 ժամ հեռավորութեամբ, և իսկէնտէրունի մօտ կան եղեր քարեղի աղբիւր մը, և քրօմի հանք մը, վերջապէս Ձէյթունի լեռան վրայ կան եղեր արծաթի երկու հանքեր:

Անգլիոյ նաւատորմից քանի մը առնէ Վալ ինչպէս ետեւ Միկրոնէսի շատ եղերքներ պիտի այցելէ: Նախ Սէլանիկ պիտի երթայ և քանի մը նաւահանգիստներ հանգիւյսելէ ետեւ իզմիր պիտի գայ:

Էրսրէս կըսէ թէ այս օրերս Փողեքանոց զրկուած են 10 հազար ոսկիի արժողութեամբ մէ՛ ճիւղիներ, որք քառորդ մէ՛ ճիւղի, երկու գրուշնոց և աւելի մանր ստակ պիտի կոխուին:

Էրսրէս Մասիսէն առնելով կըսէ թէ, Ասիոյ սովբոց յանձնաժողովը, հանգանակած 6,300 ոսկիի գումարը չահեղինելու համար Պոլսի մէջ թի՛ծարկելը խանգարող միջոց է, որովհետեւ արծաթի արժեքն օրօրէն վարձաք գումարելով ի հարկին սովբոց օգնութեան համար պիտի գործածէ:

Ճերմակ-Հաւառի լրագիրը կըսէ թէ, որչափեցաւ որ Պոլսի և գաւառաց մէջ գտնուող բոլոր տպարանապետք գտնէ երեւոյն և հինգ տարեկան հասակը լրացուցած ըլլան: Եւ այս պատճառաւ սկսուած է եղեր տպարանապետներուն երաշխաւորութիւնները նորոգել այս պայմանով:

Սէլանիկէն եկած հեռագիր մը կ'իմացունէ թէ, ութ աւազակներու նոր խումբ մը բռնուած է Վիլնիւթի գիւղակին անբնակ տան մը մէջ:

Թղթատարութիւն և Տաճիկ լեզուով միայն հեռագրութիւն հաստատուած է Ալաշկերտի կա-

յարանէն Կարինի մեծ ճամբուն վրայ, մինչև Պայաղիտի սահմանագրութիւնը:

Սէլանիկի պաշտօնական թերթը կը ծանուցանէ թէ, Ռահման անուն համբաւաւոր աւազակապետ հալածող և սպաննող, զինուորութեան կարգին Եփրատի տանապետը տան օսման ետն ոսկի վարձատրութիւն մը ստացած է տեղւոյն Վարչական ժողովոյ որոշմամբ:

Ենանայի վերջին լուրերն դուրսուցիչ են, կըսէ Էրսրէս, հասարակաց պաշտօնութեան տեղակէտով: Շատ ապաստակաց խումբեր որք ահաւորող կազմէին Եփրատի կողմերը, բոլորովին ջնջուեցան: Սթամբուլ աւազակապետին մահն ստուգուեցաւ: Այս սոսկալի աւազակն որ իր խումբին հալածման առնէ կրցած էր փախչիլ իր մէկ ընկերին հետ, ալ չէր համարձակած երեւիլ և ծով կեցած էր երեք օր:

Ապա Բոսնիոյ գիւղին բնակչաց կողմանէ սպաննուեցաւ, ուր մտած էր անթուղիք միջոցով իր ընկերը, թօլիս, ողջ բռնուելով իշխանութեան յանձնուեցաւ:

Օրտուէն Նէղորոս Յոյն թերթին զրկուած թղթակցութիւն մը կըսէ թէ, այդ կողմի գիւղերուն բնակչաց կացութիւնը ողբալի է որք կ'ընկճին աւազակութեանց ներքեւ: Ապաստակները, որք մեծ մասամբ գաղթականներ են գոհ չեն ըլլար մինակ լեռներու վրայ գործելով, այլ կը յարձաքեն գիւղերուն վրայ ալ յարձակելով մարդեր վերցունել և բնակչութիւններ իսկ ընել: Գիւղացիք կրցածնուն չափ կ'պաշտպանեն ինքզինքնին, և մինչև իսկ յաղորտ են այս չարագործաց մի քանին բռնելով իշխանութեան յանձնել:

Երեքշաբթի օր Բիւրսի մէջ երկրաշարժի ցնցում մը եղեր է, ստորերկեայ որոտումէ մը ետեւ:

ԳԱՏԸ ԳԻՒԴԻ ՀՐԴԵՀԸ

Էրսրէսի Սեպ, 26 թիւ թերթին մէջ հետեւեալ կը կարդանք:

«Այս առաւօտ, կէս գիշերէն քիչ մ' ետեւ: Հրդեհը ծագումն առաւ Հաճաքի Պիրաբային մէջ որ Գատը գիւղի շուկային մէջ կը գտնուէ: Հիւսիսային հողմն այնքան սաստիկ կը փչէր որ կըրակը ճարակեցաւ ակնթարթի մը մէջ չըլնալայ խանութներուն և տուններուն մէջ: Կայծերն այնքան կըմղուէին հողմն, որ կրակէն երկու հարիւր մէթը հեռաւորութեամբ տուններ բոցերու կը մասնէին, և հրդեհն սկսելէ մէկ ժամ ետեւ, տաճկաց քաղնիքէն և յունաց Ալիա-Ֆիլիսիս եկեղեցիէն մինչև Բիւրսի փաշա խիւղիւսի տարածութեամբ, ամբողջ թաղը բոցերէն ծով մը գարծած էր:

Երեսուն տարիէ ի վեր Գատը գիւղը, և 1870 էն ի Պոլսի այս պիտի ահեղ հրդեհ մը չէր պատահած: Առաւօտեան ժամը Չին հասան քաղաքին ջրհանները Մահալէի ընկերութեան երեք

շղթանաւերով: Ջուրին պակասութիւնն ու հողին սատկութիւնը չ'թողցին որ հարկ եղած օգնութիւններն ընէին համառ ջերմութիւնները: Կրակէն ազատելու կամ ինչքեր վերելու համար կիւսամերկ կանանց և տղոց տեսաւ ընդ որոսց ժողովի էր: Բարեբաղդարար մարդու միայն չ'այ, Այս առաւօտ կըսուէր սակայն թէ տղայ մը անկողնոյ մէջ մտնողն և այլաբար էր: Ժամը տասն հողմն ինչպէս, և կարելի եղաւ կրակին ճարակման առաջն առնել: Երկու հարիւր յիսուն չափ տուն և խանութ, որոց շատը քարաշէն, բոլորովին այրեցան: Ի բաց առեալ քանի մը բնակութիւններ և արձարաններ, ամաց մեծ մասը աղքատաց դասուն կը վերաբերէր:

Սողոմոն Պապունի մեծահաւուստ ժառանգութեան ինքնոյն վրայ՝ հետագայ տեղեկութիւնները կուտայ Բուլթայի Օգոստ 23 թուով գրուած նամակ մը:

«Ինչպէս գրած էի նախորդ նամակս, Գափաթեանց արժաւ. Տեղիւն քահանայն ի Բօթի ինչաւ ամայս 10ին երեքշաբթի օրը: Ժառանգութիւնն հաստատող գրեթէ օգտուէն ձեռնէր Լոնտոն, Բեդերսպուրի, Ռուսական Կալիպր քաղաքի և Հայ քաղաքացի ուղարկուեցան: Լոնտոն ուղարկուելուն նպատակն այն էր, որ այն տեղի կտակաց Հոգաբարձութիւնը հրահանգ պիտի տայ Հիւսիսատարանին, թէ ինչպէս պէտք է վերջնայ գործը, Բեդերսպուրի ուղարկուելուն նպատակն այն էր՝ որ արտաքին գործոց պաշտօնէին պիտի հրամայէ Տփլիսի պետական ժողովին, որ վերջին քննութեան օրը Ռուսաց տէրութեան աստիճանաբար ժողովին պիտի մասնակցին և նոցա ներկայութեանը պիտի գտնուին:

«Ռուսիոյ Կալիպր քաղաքի խմբագրութեան ուղարկուելուն նպատակն այն է, որ պաշտօնապէս հրատարակուի, թէ հանգուցեալ Սողոմոն Պապունիի ժառանգութիւնները արդէն գտնուած են, և սեպտեմբեր ամիսը յետոյ՝ իրեն ժառանգ Անգլիոյ հիւսիսատարանին կամ կառավարութեան ներկայացուցները իրաւունք չունին իրենց գտած ընկել ընելու: Անգլիոյ քաղաքացի մէջ հրատարակելին ալ նոյն նպատակին կրճառայէ: Բայց յայտնէ, կայ մի ուրիշ խնդիր որ հիւսիսատարանը Տեղիւն հօրէն: Անցեալ տարի Լոնտոնի 3000 անգլիական լիրա կուղարկուի Բօթի Գաղղիոյ հիւսիսատարանին, որ հանգուցեալ Սողոմոնի ժառանգները ինտուրն ծախարկութեան ծառայէ: որովհետեւ անցեալ տարի Բօթի քաղաքին մէջ Անգլիոյ հիւսիսատարանը, այդ պատճառաւ այս գործը առժամանակեայ կերպիւ կը յանձնուի Գաղղիոյ հիւսիսատարանին: այն ալ օչինջ չ'գործելով հեռացեր է Բօթիէն և բնակուած է Տփլիսում: այժմ Անգլիոյ մեծ և փոքր հիւսիսատարանները (որովհետեւ աներ և փեսայ են) կ'ընդունեն որ ինչեալ 3000 ոսկի գումարին համար ժառանգորդները ստորագրութիւն տան, որ յետոյ դատ չ'ստան և չ'պահանջեն: Թէպէտ Ժառանգորդները այդ ստորագրութիւնը տալու չեն վարանում, սակայն և այնպէս փաստաբանները համարել են չունին, որովհետեւ Թէ թէ փայն 3000, այլ մինչև 23,000 լիրա դուրս ելած է այդ գումարէն (կապէն) դանազան պատճառներով և դանազան անձանց ձեռքով: այժմ փաստաբանները պահանջում են որ հիւսիսատարանները մանրամասն հաշիւ տան ժառանգորդաց և ապա պէտք

եղած ստորագրութիւնը տրուի հիւսիսատարան: Հիւսիսատարանի քանի օր ժառանգի խնդրեց, փաստաբանաց առաջարկութիւնը գոհացնելու համար: Այս ալ պէտք է գիտնալ, որ Տփլիսէն երեք անձնագրութիւնը, և երեքն էլ աղղեցութեանց տէր մարդիկն են, հզօր փաստաբաններով կաշխատին ինքզինքնին ժառանգորդը ընդունիլ տալու համար: բայց նոցա ձեռքի գրութիւնները կառավարութեան վաւերացեալ չ'իյնելով հանգուցեալ Սողոմոն Պապունիի ժառանգորդ ըլլալուն ո'չ մի զօրաւոր սպառնոյց չ'այ: և հիւսիսատարանները իրենց էլ ասում են, որ «այսպիսի խնդիրներու մէջ ոմանք փողի զօրութեամբ և ոմանք լեզուի ճարտարութեամբ և ոմանք ալ խարդախ ձեռքով պիտի աշխատին ու պիտի ճողանին ժառանգորդ ցոյց տալ իրենց, և ի հարկէ մինչև գործին վախճանը այսինքն պայմանաւոր, մեզ գիւսիստարանը ընդունելու պարտաւորեալ ենք: իսկ այնուհետեւ օրինաւոր ժառանգորդները կտանին յաղթութիւնը և այլն:

«Արախտութեամբ կառնուած թէ օրինաւոր ժառանգորդը արդէն միայն բանութեամբ ստորագրած են՝ այս ահագին գումարէն մի մաս աղղային գործոց նուիրել:»

ՀԱՅՐԵՆԻԲ

ՀԵԳՆԱԿ

ԻԶՄԻՐԻ ՓՈՐՁԱՆԻՔՆԵՐԸ

(փողոցներն ըսել կուզեմ)

Երբ Քարալին հասայ, կանգ առի մերենաքար և ալուցեալ աչք նայեցայ այն եթերադոյն ալեքսան տաւաճութեան վրայ, ուր հին դարէրու մէջ հօրս ամենածաւալ և ահեղ զատաւոր իշխանութեան մէկ մասնիկը իրենէր: Կահալիսը վէտ վէտ կը ծփային հոն, և ահա, ո'վ զարմանաց, յանկարծ ի հեռուստ հորիզոնին արևմտեան ծայրը կընդունար իմ Երզնայի: Արշալոյսը գեղարարորդին որ գէպի եզերք կըստարարաւ ալեայ վրայէն . . . ո'վ Չեփիւս, դո'ն ես ուրեմն որ Ողիմպոսէն կը հանան իմ ցաւերս ամբար, դո'ն ես ուրեմն որ կուգաս ըստ տաղաւարած զօրութիւնովդ իմ վտաշարչար ճակատոս շոյելու: Եկուր քաղցաւալնիդ իմ պատանին, եկուր և իմ հրատապ երեսն հովազէ, մինչև որ գտնուի Անթուանի որուն համար ինչպիսիք իմ Երզնայի և որ կարող է իր մարդկային բնութեամբն հանդերձ յաղթանակ սիրտս, հովազել մարմնս և ամբողջ միջոցներս, որոցմով լցայ և ոսկաւին պիտի լցուիմ Իդմիրի փորձանքներուն մէջ:

Բայց դու, մի թողուր պիս ո'վ Չեփիւս, ե'կ շոյել իմ երեսն հոն ուր պիտի տալիս և Անթուանի ըսել լինէրուս վրայ խորհիմ: Բաւ է կէս ժամ հանգիստ և ապա պիտի մտնեմ կրկին հաղար և մէկ անգուցնելու մէջ . . .

Ենթադրեալ եմ Չեփիւսէն, այն զովապարգեւ պատանին որ քաղցաւաճեցաւ հեռուէն ինձ և անդադար չոյել երեսն, մինչ ես մէկ կողմէ խոր մտածմանց մէջ ընկղմած և միւս կողմէ Չեփիւս պատանիին հեշտութեամբն աղբիւր՝ ախտիս մէջ անհաշիւ շարժ և մեղկանդամ մտացած էի:

Ո' հովազել իմ Չեփիւս, ո'վ ոգիդ Ողիմպոսի, թողիդ իմ պատանեակի, հրապուրելի տիկնոջդ մասնակ . . . Ահ, մեղիութիւն, թոյն քաղաքահան, դո'ն ես որ օճանման կրկնիս երակներուս մէջ սողայ . . . Ահ, Հիւսիս . . . Անթու . . .

Աշխուճ են վառ, ֆօքեր կամար, Վարսերն ըստուար, Ահ, թող մատչի, կուրծքին տամ փարս

Շուրթերն են հոծ, Բերանն հնոց, Լեզուն է բոց . . . Ահ, թող մատչի նետուիմ յիւր ծոց: Բերերն են հուր, Ակնարկն է սուր, Հերքն է դանդուր . . .

Ահ . . . չմտայիր . . . ցնորք, ի դուր: Մեծ դ' իրոյս յանկարծ ինքզինքիս եկայ և տեսայ որ քնանալով երազներու մէջ թաղուէր եմ: Չորս կողմն նայեցայ, պատանեակն աներկոյթ եղած էր, աւաղ . . . Չեփիւս, Չեփիւս: Չայն չիար, խոյս տուէր էր ըստէս և գէպի հորիզոն բարձրանալով՝ խիւստու ելած էր:

Օրն սկսած էր տարածալի: Արեւ գալան լոյսին յաղորդէր էին արուեստական լոյսեր, որք աստ և անդ ցիւրուցան կըլլային Բարափին վրայ տնկուած երկաթեայ սիւնակներու զագաթը:

Մշբերս վերցուցի գէպի հորիզոն և տեսայ հոն քանի մը աստուածներ որք երկնից դէպիւն շուրջ բոլորուած էին, և զխոյն իր փայտը կրն ծայէր երկրիս: Կրկին նստայ և մտախնայեցի թէ. — Անբաղդ եմ, որ կրկին չ'ընայ Անթուանի երթալու ժամանակ ունենալ, զի գիշերը վրայ հասած էր, մինչ ես ինքզինքն Չեփիւսին յանձնած՝ կ'երազէի . . . առ Անթուան, որ պատճառ եղաւ այս անկարողութիւն չարաբանացս և աղտիցս: Սակայն, աղէ, միթէ մարդերն ալ չունին աստուածներուս կիրքն ու յատկութիւնները, մարդերը՝ որ մեր պատկերին վրայ ձեւուած են: Ինչ որ է Վէնիս կամ Ատոլիկ մեզ համար, նոյնը չէ՝ միթէ Անթուան մարդոց համար: Եւ աղէ՛ միթէ աստուածներս ալ չունին մարդերուն կիրքն ու յատկութիւնները, աստուածներս՝ որ մարդոց կրկն և յատկութեանց անձնագրութիւններն ենք, աստուածներս՝ որ մարդոց երևակայութեան պտուղներն ենք, աստուածներս վերջապէս որ մարդոց յատկութիւններուն նախնայն ենք:

Երբ փիլիսոփայութեան և գիտութեան դիտակէտն նայիք, մարդերը աստուած են, և աստուածներն մարդ: Աւաթի, ինչպէս որ մարդերը կըլլային և կըստարան առ Ատոլիկ, աստուածներն ալ նոյնքան իրաւունք ունին զմայլել և տրիպալ առ Անթուան: Ինչու ուրեմն չհամբերեմ Անթուանի ինձ առթած չարաբանքներուն, քանի որ ես ալ իրաւունք ունիմ . . . տրիպալ առ ինձ: Սակայն, կըցալիմ որ այս Երկուն ալ չ'պիտի կրնամ անցունել անոր քով, քանի որ օրը տարածալ մամ, զիշերը հասած և Իզմիրի փորձանքները մեծ մասամբ անձնօթ են ինձ: Ժամանակաւ ինձ եմ Իզմիրի լեռներուն վրայ, բայց . . .

Յանկարծ մէկը ներկայացաւ ինձ և մտախնայեցի ինքնուրու ընդմիջեց, ըսելով.

— Պարոն, ինչ կընենքդ է:

— Անթուան . . .

— . . .

Հարցունող նախ զարմանաց նըլ չունենար արտայայտեց, յետոյ չուարեցաւ և քանի մը անդամ իրենի տուաւ ուղղաւ, և սպա իմանալով թէ ես օտար մ'եմ այս երկրին, և թէ չեմ գիտէր ուր գտնուիս, յարեց.

— Ուշաբէ՛ պարոն, հոս Բագոս ետն տաճար մ'է, և այցելուել կը պարտի հոս բաժանիկը պարտել, արդ ինչ բաժան կուզեմ պարտել:

— Նեկտար կուզեմ, ըսի և նեկտարը պարտելով օրացայ խոյն Բարափին վրայ:

Չարմանալան տեսարաններ կընեւ. կայէին աչքիս: Մէկ կողմէ մարդէրու ահագին բազմութիւն մը երէ էջ կ'առնէր Քարափին վրայ, միւս կողմէ անթուրի բազմութիւն մ'ալ մեր հոմակերտ բարեկամ և ընկեր Բագոս կըտնէր, նորա յիշատակն անմահ և յաւիտեական պահելու հա-

մար կանգնած տաճարներուն ներսն ու դուռը խռնած : Տեղտեղ Այստեղ նը կըծաղըին , հոս հոն մուսաներու հետեւի ուղեւոր Պարսաւի արժանւեաց կըդպչէին : Բայց եւ առանց ունենալու ինչեւէ ընկերային կապի , ներսն , ելեւէջ առնող մարդոց բազմութեան մէջ մտնելով ուղղութեամբ Գարափին դէպի Հիւսիսային արեւելեան կողմը , որ կ'առաջնորդէր իջ-միրի մարդ արարածոց Հայ-Լայֆն բնակած վայրերը : Ընթացքիս միջոցին , որ իջմիրի միւս շրջանաց ընթացքէս խիստ տարբեր էր , կըտեսնէի , որիչ շատ բաներէ գտաւ , նաեւ Անթուարի ցեղէն արարածներ , որք Ասիական յիշատակները կը զարթուցանէին յիս , զոր մուցած էի Ողիմպոսէ հեռանալու քի վեր :

Չմայելի տեսարան , միթէ յուսալի էր որ Զեփիւռ պատմեալը կըրնայունելն ետեւայքան կարեւորագոյն զուարճանալ մարդերու ներկայութեան , միթէ կարելի էր որ հարեւրաւոր Փորձանքներու մէջ տանջուելէս ետեւ , այսքան հակապատկեր մը ներկայող Փորձան . . . ուղիի մը մէջ գտնուելի , ուր տեսնէի այնպիսի Անթուարի մանկան արարածներ որք հոգիս վրդովէին , միթէ յուսալի էր , որ մարդկային կին էակն այնքան առաջ դիմած ըլլար Աստղիկի նմանութեան մէջ . . . Ողիմպոսէ հեռու թիւններն սկսած էին մասամբ պատկերիլ հոգւոյս և մարմնոյս աչացն առջև . Կըլիշէի յաւերժանարարաց հրաշալիս խուսիս , որ Ապոլոնի մէկ ամենաթով չեղանով ի պար կըլիւթար՝ աստուածներս հրապուրելու . . . ի յիմարութիւն : Այսպէս կըստանային ահա և ստուերի պէս կը սահէին չորս կողմէսկաւ զիկին իրականութիւնները՝ զորս զարմանալի է լսել , որ Պրոմէթէի անգղակուրծ բաղդին կուգին մասնակցիլ , հաւասարիլ ուղիւրով Անդրասի կենաց շարժարաններուն . . . :

Բայց , ուր կ'երթայի , մարդու և կնոջ վերաբերող այս խորհրդածութիւնները , Աստղիկի անձնաւորութեան այդ հեղուկի կենդանի պատկերներն յափշտակէր էին միտքս , և տեսայ որ բաւական յառաջացր էի Փարափին հիւսիսային արեւելեան կողմը : Մարդերու բազմութիւնն սկսած էր նուազիլ , ուստի վախճալով որ անեւ տեղ մը կը հասնիմ , փութացի ետ դառնալ ընդ կրուկն և ուղղիլ դէպի հակակողմայինքն դէպի հարաւային արեւմտեան կողմն Գաւախանց :

Հազիւ քանի մը քայլ առէր էի և ահա ձեռք մը դեպի ուսիս վրայ և ձայն մը լսեցի ետեւէս որ , կըսէր .
— Դու ե հոս

Պրոմէ

ԱՌՆԵՆ ԼՈՒՐԵՐ

Ընկերութեան մը մէջ Հրէից դէմ եղած հալածանաց վրայ վիճաբանութիւն կըլար :

Մաքան , միշտ առիթը չկորսնցուներ , այս տեսակ խաղաղ—կռու—քայլ—էկեղեցական խնդիրներու մէջ իր ծանրակշիւ կարծիքներն յայտնելու , յանկարծ ոտքի կելլէ և ազատամիտ եղանակաւ մը կը գոչէ կատաղօրէն .

— Ահ , զարմանալի բան , սոսկալի բան , ուրեմ ձեր մէջ կան մարդիկ որք Հրէից դէմ եղած հալածանքներն իրաւացի կը գտնեն . . . : Կրտէք , որ ես ընտ մէկ կըսէի կոսակցի ձեռք . . . բայց ո՞նք անդր , միթէ ամենքս ալ եւթայր լինէին Բրեյտս :

Թրամպայի մէջ :
Հոյր սաստիկ է : Պարոն մը սիկաւ ըէթ մը հանելով , կրակ կուզէ քովին , որ լուցիկի արծաթեայ տուփ մը կը յանձնէ իրեն : Քսաներորդ լուցիկին մեր պարոնը տեսնելով դեռ չկրցաւ վառել , առիւթն տրոջ կը

դառնայ և անտարբեր դէմքով մը կըսէ ,
— Այս լուսիկ հոգի ալ չձգեց որ լուցիկները չըսպառէի .
— Ահ , հոգ չէ , բաւական է որ տուփս ապառուի հովին սաստիկութենէն . . . :

ԱՌՆԵՆ ԸՏՈՒՐ

ՉԱՄԻՉ—ՍՈՒԼՈՒՆԻՆ . — Հրապարակը հանդարտ է . մինչև այսօր եւ կած արարածը 100,000 կենդանար . Էքսթրա ծախուեցաւ 5 էն 5 25
Ա. Տեսակ » 4 էն 4 75
Բ. Տեսակ » 5 50 էն 5 25
Հասարակ » 5 էն 5 25
Թաց » 2 20 էն 2 25
Քարապուրուն » 6 էն 6 50

ԲԱՋԱՆԻ . — Տեսակներու համեմատ էլլմէ եէրի ծախուեւ 2 57 էն 275
Զէօփի 1 75 էն 2 . — Ուրիս տուփով պարարատ 110 էն 108 կենդանար . Քարապուրուն 5 57 էն 5 62 :

ՍԵՒ ՉԱՄԻՉ . — Թիւրէ և Այսրէի տեսակներէն Քրանքո : Եէրի ծախուեցաւ 72 էն 75 . — Թիւրէ 79 էն 80 . — Այսրէ 85 էն 84 . — Ֆոչա 86 էն 87 . — Իրքարա 2 12 էն 2 17 . — Միքէթ այս շարքի Եէրի ծախուեցաւ 60 էն 65 . — Սուսա 77 էն 78 :

ԹՈՒՉ . — Վերջի օրերս միօրինակ տեղացած անձրևներուն պատճառաւ գինները զգալի տարբերութիւն մը ըրին . մինչև այսօր եկած 55,200 բեռ . Էքսթրա ծախուեցաւ 250 զրէ . Էլլմէ 140 էն 180 . — Հասարակ 83 էն 195 :

ԱՅԻՈՆ . — Այս արարածը գնողները ընտրել ուղեղնուն պատճառաւ շատ դժուր չեղաւ , միայն 116 կողով ծախուեցաւ . մինչև այսօր եկած արարածը 1605 կողով է , որու համապատասխանող անցեալ տարուան թիւն դ 2155 : — 9 հատ հին Գաւախար գին 106 . — 60 հատ ամէթ 100 . — 24 հատ չուլ 108 . — 4 հատ

առէթ ընտրել 104 — 19 հատ չուլ քընթը 83 էն 67 : Հրապարակը թոյլ է ԲՈՒՐԳ . — Ամսէ մը ի վեր գործը չըլլալէն վերջը այս շարքի 600 կենդանար ծախուեցաւ Գոնեա 550 զրէ և Պուլուր 545 զրէ :

ՃԷՆՐԻ . — Այս արարածը թիւրէ շատ կուզուի կոր բայց հրապարակին վրայ արարածը չըտեսնելուն համար դժուր չեղաւ 18 զրէ վճարող կայ :

ԽԱՇԽԱՇ . — Եկածը կը ծախուի 75 փարայէն աւելի առնող չեղաւ :

ԳԱՐԻ . — Գինները տարբերութիւն մը ըրին :

ՅՈՐԵՆ . — Օրէ օր գինները կ'ընտաւ վրայ եւ այս շարքի 1 զրէ աւելի վար ծախուեցաւ :

ԲԱԼԱՍՏԻՆ . — 4800 կենդանար ծախուեցաւ 71 էն 105 զրէ . տեսածին համեմատ :

ԲԱԿԱՆ . — Այս արարածը աւելի շատ բանուած է 250,000 հոսա ծախուեցաւ 56,50 էն 57 50 փարայի հոսան :

ԱՐՇԱՆՈՅՍԸ ձեռքէ կը ծախուի հետեւեալ տեղերը ,

1. Բէշլիսի ճատտէսի ծխաւաճառ Պ. Արտաշէս Ոսկանեանի քով :

2. Քարափին վրայ Գարշէ-Եւա . գայի նաւամատոյցին դէմ , ծխաւաճառ Պ. Կիրակոսին քով :

3. Քարափին վրայ ծխաւաճառ Պետրոսի քով :

Հաւը 3 մէթալիք :

ԳՐԱՄԱԿԱՆ			
Փոխանակագիր	Կ. Պօլոյ վրայ		124,75—
»	Լոնտրա երեք	ամուսան	135,25—136,25
»	»	օրուան	136,75—137,50
»	»	ամուսան	214,25—216,
»	»	օրուան	216,25—218,25
»	»	ամուսան	448,50—452,50
»	»	օրուան	454—457

	քամիօ	թարիֆա	ողջ
Արծաթ մէճիտիէ	23,15	25,05	20
Ոսկի օսմանեան	125,	135,26	107,99
Սթերլին	137,	148,25	118,36
Ոսկի դաղդիական	109,50	118,49	94,60
Վեցնոյ	101		
Հինգնոյ	—		
Մէթալիք	63,		
Թղթագրամ	1000		

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ձ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պ. Յ. Պերպերեան պառիւ ունի ծանուցանել հասարակութեան որ թէ տախտակի և թէ մետաղներու վրայ ամեն տեսակ ՓՈՐՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ընելու պատրաստ է աժան գիններով :

Կը տալէ նաեւ ԱՅՅԵՏՈՒՄԵՐ , հարանայ , յուղարկուելութեան հանդէսի և ն շՐԱԿԻՐԱԳՐԻՐ , թէ մեծ և թէ փոքր ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ , ԸՆԿԱԼԱԳԻՐ , ՓՈՒՆԱՆԱԳԻՐ , նաւակի ՎԵՐՆԱԳԻՐ և ն և ն :

Կը շինէ նաեւ պատերու վրայ զանազան նկարներ , և խաւսութներու վրայ կախուած նշանաբաններ և ապակիներու վրայ զանազան տեսակ գրերով անուններ եւ այլն :

Պէտք ունեցողը կրնայ գիմել Սէվիլ Խան , վերի յարկ թիւ 17 Լրագրոյս սենեակը :

ՊԱՇՏՕՆԱՏՈՒՆՔ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆՑ

ՀՐԴԵՀԻ

QUEEN INSURANCE COMPANY

ԹԱԳՈՒՀԻ

ՍՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԼԻՎՐՐՈՒԼԻ ԵՒ ԼՈՆՏՈՆԻ

Դրամագումար 2,000,000 Անգլ. ոսկի

ԾՈՎՈՒ

RELIANCE

MARINE INS. CO. LD.

ԾՈՎԱԹԻՆ

ՍՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԼԻՎՐՐՈՒԼԻ

Դրամագումար 400,000 Անգլ. ոսկի

Սոյն ընկերութիւնը ֆոքր Ասիոյ դիւտար քաղաքացի Քարամանիոյ Սուրիայի , Արշիպեղեան կղզեաց , Բուսէլի և Յունաստանի մէջ ճիւղեր հաստատած են :

Կեդրոնական Պաշտ օնատուն

Փրանկայ թաղ Քոնստանդուլի Ֆերիսանէն վերի յարկը թիւ 2 և 3

Ընդհանուր գործակալ ճՕՆ Ա. Ա. ԿՈՒ

ԳՐԱՄԱԿԱՆ

Բէշլիսի մէջ յայտնի Սէֆերեան Խան վերի յարկը թիւ 3 մանրամասն տեղեկութեանց համար պէտք է գիմել ընկերութեան փոխ գործակալ Յ. Կ. Հիւսնեանի վեպեալ Խանին քով ետպահանելու ընդմիջան :

LONDON & LANCASHIRE

ԴՐԱՄԱԳՐԱԿԱՆ

ԱՆԳՂ. ՈՍԿԻ

1,852,000

ԴՐԱՄԱԳ. ՊԱՀԵՍԻ

ԱՆԳՂ. ՈՍԿԻ

232,918

LONDON & LANCASHIRE

ԼՕՆՏՕՆ ԵՒ ԼԱՆԿԱՇԱԻՐ

ՁՐՊԵՐՊԵՐ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Սոյն ընկերութիւնը որ հաստատուած է 1862 ին կապաւ հովէ միմիայն հրդեհի վտանգներու դէմ :

Հասարակաց շէնքերու համար 9/0 20 զեղջ կըլլայ :

Ընդհանուր գործակալ և փոխանորդը Ջոն Կոնիոյ և Վիլյայէթին միւս քաղաքացի համար :

ՅՐԱՆԿԵԱՆ և ՋԱՄԱԲՈՒՐՈՒՐ

FRANGHIA et ZAMACOPOULO

Դրամանեակ ետ վան օղու Խան թիւ 3 Արշիպեղի մօտ :

Ապահովելու ուղղող կրնայ գիմել նաեւ Բուսիլի Պէտէս թիւ 8. Դերձակեան եղբայր գրասենեակը :

THE COMMERCIAL UNION

ԴՕՄԷՐՍՈՒՄԼ ԻՒՆԻՕՆ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ԴԵՄ

— 0 —

ԴՐԱՄԱԳՐԱԿԱՆ 2,500,000 ՍՊԷՐԼԻՆ ՈՍԿԻ

— 0 —

Այս Ընկերութիւնը հրդեհի դէմ կ'ապահովէ Իզմիրի և շրջակայ գիւղերուն մէջ , շէնքեր , կահկարասիներ , ապրանքներ , կալուածներ , գործարաններ և այլն :

ԴՕՄԷՐՍՈՒՄԼ ԻՒՆԻՕՆԸ միւս բոլոր ընկերութեանց տուած առաւելութիւնները կուտայ իրեն ապահովագրներուն :

Վճարելիք տուրքերը մասնաւոր պայմանագրութիւնով մը այս քաղաքացի անուող միւս անգլիական ընկերութեանց վըճարած տուրքերուն հաւասար են :

Վարը ստորագրողները արտօնութիւն ունին այս տեղ Ընկերութեան դէմ որեւէ գանդատի դահաւթիւն տալու :

ԴՐՈՒՄԱԿԱՆ ԼԱՆԿԱՇԱԻՐ

RALPH et JOHN GOUT

ԲԱԼԿ. և ճՕՆ ԿՈՒ

ԱՐՇԱՆՈՅՍԻ ՏՊԱՐԱՆ